



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

10.05.2017թ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-27/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-27/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից՝ և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ ներկայացված «Սենտրալ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00154817) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-27/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ Նախագահի աշխատակազմի 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրությունները և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրությունների հիման վրա, 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սենտրալ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ Նախագահի աշխատակազմի 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրություններով ներկայացրել է «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/67» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) 26.01.2017թ. թիվ 01/04.1/231-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Սենտրալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 12.01.2017թ. գրությամբ հայտնել է, որ 2016թ.-ի նոյեմբերի 15-ին մասնակցել է ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/67» ծածկագրով գնման ընթացակարգին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ լոտերով:

Ընկերությունը իր գործունեությունը սկսել է 2016թ.-ի հունիսի 9-ից, ներմուծում է բարձրակարգ անվադողեր մատչելի գներով:

Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ ներկայացրել է 164,640 և 925,920 ՀՀ դրամ արժողությամբ կատարված պայմանագրեր՝ հանձման-ընդունման ակտերով և հարկային հաշիվներով, որտեղից ակնհայտորեն երևում է, որ Ընկերության համախառն եկամուտը մի քանի անգամ գերազանցում է ներկայացված գնային առաջարկը:

3. ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Նախագահի աշխատակազմը 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրություններով ներկայացրել է «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/67» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-27/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ ներկայացված «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սենտրալ» ՍՊԸ-ն ՀՀ Նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 14.11.2016թ. հայտ է ներկայացրել: և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 16.11.2016թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 18.11.2016թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Սենտրալ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն **(14.11.2016թ.)** նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար չունի:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2016թ. նիստի N 67/3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար չունենալու հիմնավորմամբ:

5. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրությունների հիման վրա, 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սենտրալ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

6. Կենտրոնը 26.01.2017թ. թիվ 01/04.1/231-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արժանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցների» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

(...)

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանարիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները, կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կապարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:»

«Սենտրալ» ՍՊԸ-ն ՀՀ Նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/67» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 14.11.2016թ. հայտ է ներկայացրել: և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով՝ 16.11.2016թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 18.11.2016թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Սենտրալ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն (14.11.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար չունի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2016թ. նիստի N 67/3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար չունենալու հիմնավորմամբ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 23.11.2016թ. թիվ ԳԿ-923 և 08.12.2016թ. թիվ ԳԿ-977 գրությունների հիման վրա, 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սենտրալ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 26.01.2017թ. թիվ 01/04.1/231-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2016թ. թիվ 04/73-3/27991-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Համաձայն գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. թիվ 67/2 արձանագրության՝ «ՀՀՆԱ-ՇՀԱՊԶԲ-15/6-16/67» ծածկագրով ընթացակարգի գնման առարկաների /չորս չափաբաժին/ ավտոմեքենաների անիվներ /215/60 Ռ16/, /205/55 Ռ16/, /215/55 Ռ17/, /245/40 Ռ20/, նախահաշվային գինը՝ գնումների պլանի համաձայն, համապատասխանաբար կազմել է՝ **1260000, 2000000, 180000, 276900 ՀՀ դրամ /ընդհանուր՝ 3,716,900 ՀՀ դրամ/**

Վերոհիշյալը փաստում է, որ «ՀՀՆԱ-ՇՀԱՊԶԲ-15/6-16/67» ծածկագրով գնման ընթացակարգի գնման **առարկաների նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը**, ուստի Կարգի 67-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը «Ֆինանսական միջոցներ» չափանիշին բավարարելու համար իր հայտով պետք է ներկայացներ միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ն, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշին բավարարելու համար պարտավոր չէր իր հայտով ներկայացնել հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից և ավելին, չէր կրում պարտավորություն ունենալու իր գնային առաջարկից ոչ պակաս հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով՝
ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2017թ. թիվ 03/73-3/2067-17 գրությամբ ներկայացված «Սենտրալ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00154817) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել և «Սենտրալ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:


Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

անդամ՝



Արմինե Նամայան